

4023

Купон
университет
Иог

17B

891.71
9-34

Смѣт
1904

2011

891.71-3

2-34

87

Ա. ՉԵԽՈՎ

100

830

10842

ՄԱՐԴԸ
Պ Ա Տ Ե Ա Ն Ի
Մ Է Ջ

(Զ Ր Ո Յ Ց)

Թարգմ. Ա. Բարուժե.

2003



Տպարան և Բ. Մանուկյանի Յանտիպան

1904

891.94-

9-34

ար

Ե. ՉԵԽՈՎ

207

ՄԱՐԴԸ

Պ Ա Տ Ե Ա Ն Ի

Մ Ե Ջ

(Ջ Ր Ո Յ Ց)

Թարգմ. Ա. Բարոյթը.



Հ Ո Ւ Հ Ի

Տպարան Ե. Մ. Մահտեսի-Յակոբեանցի

1904

1002
5712

()

38286



ԶՐՈՅՑ

I

Ուշացած որսորդները տեղաւորուեցին գիշերելու Միրօնոսիցեան գիւղի ամենավերջին ծայրում գտնուող գիւղապետ Պրօկօֆիայի տանը: Նրանք երկու հոգի էին միայն՝ անասնաբույժ Իվան Իվանիչ և գիմնազիայի ուսուցիչ Բուրկին: Իվան Իվանիչը բաւականին տարօրինակ կրկնակի ազգանուն ունէր. Չիմշա-Գիմալայսկի, որը բոլորովին նրան սազ չէր գալիս և ամբողջ նահանգում նրան անունով և հօր անունով էին կոչում. նա քաղաքի մօտ գտնուող ձիաբուծարանումն էր բնակում և այժմ որսի էր եկել, որպէսզի մի քիչ մաքուր օդ շնչէ: Իսկ գիմնազիայի ուսուցիչ Բուրկինը իւրաքանչիւր ամառ կոմս Պի մօտ հիւր էր գալիս և այն տեղի մարդիկ վաղուց նրան ընտելացել էին:

Նրանք չէին քնում: Բարձրահասակ, նիհար, երկայն բեխերով ծերունի Իվան Իվանիչը դուրսը մուտքի մօտ նստել էր և չիրուխ էր ծխում: Լուսինը նրան լրացաւորում էր: Բուրկինը սենեակի ներսում չոր խոտի վրայ պառկած էր և խաւարի մէջ չէր երևում:

Նրանք զանազան պատմութիւններ էին անում: Ի միջի ալլոց զրուցում էին այն բանի մասին, թէ

Հ. Բ. Մ. Ս.
 Կ. Ս. Ս. Ս. Ս.
 Զ. Բ. Ս.

Дозволено цензурою, Тифлисъ 23 декабря 1902 года.

2155.60

9

1901

գիւղապետի ամուսինը Մալրան առողջ կին է և լիմար էլ չէ. նա ամբողջ կեանքում իր ծննդեան գիւղից հեռու ոչ մի տեղ չէ գնացել, երբէք չէ տեսել ոչ քաղաք, ոչ երկաթուղի. իսկ վերջին տասը տարուայ ընթացքում միշտ վառարանի մօտ նստած էր լինում և երեկոները միայն փողոց էր դուրս գալիս:

— Այդ տեղ ի՞նչ գարմանալու բան կայ—ասաց Բուրկինը:

— Աշխարհում քիչ չեն այդպիսի մարդիկ, որոնք իրանց առանձնացած բնաւորութեամբ, ինչպէս միայնակեաց խեցգետին կամ խխունջ աշխատում են խորը մտնել իրանց կեղևի մէջ: Գուցէ ատավիզմի երևոյթէ այդ, յետ դառնալ դէպի այն ժամանակները, երբ մարդու նախահայրը դեռ ևս հասարակական կենդանի չէր և իր որջի մէջ միայնակ էր ապրում, կամ թերևս գուցէ այդ ուղղակի մարդկային զանազանակերպութեան բնաւորութիւններից մէկն է, — ո՞վ գիտէ: Ես բնադէտ չեմ և իմ գործս չէ այդպիսի հարցեր շօշափելը. ես կամենում եմ միայն ասել, որ այդպիսի մարդիկ, ինչպէս Մալրան է, հազուադիւտ երևոյթ չէ: Ինչու հեռու գնալ, սրանից մօտ երկու ամիս առաջ, իմ ընկեր, յունաց լեզուի ուսուցիչ, ոմն Բէլիկով, մեր քաղաքում վախճանուեց: Ի հարկ է, դուք նրա մասին լսած կը լինէք: Նա նշանաւոր էր նրանով, որ միշտ, մինչև անգամ չաւ եզանակին կրկնակօշիկով, հովանոցով և անպատճառ բամբակի աստառ ունեցող տաք վերարկուով փաթաթուած էր դուրս գալիս: Եւ նրա հովանոցը պատեանի մէջ էր, իսկ ժամացոյցը գորշագոյն զամշ կաշուէ պատեանի մէջ, և երբ գրչահատը հանում էր, որպէսզի մատիտը սրէ, դանակն անգամ փոքրիկ պատեանի մէջ էր, և կարծես թէ երեսը նոյնպէս պատեանի մէջ լինէր, որովհետև դէմքը թագցնում էր վերարկուի բարձրացրած օձիքի մէջ: Նա մութ գոյն

ունեցող ակնոցներ էր դնում աչքերին, հագնում էր ֆուֆայիայ և ականջները բամբակ էր խծկում ու կաւք նստած ժամանակ միշտ պատուիրում էր կառքի ծածկոցը բարձրացնել: Մի խօսքով այդ մարդու մէջ նկատուում էր մշտական թաղանդով շրջապատելու՝ անյաղթելի մի ձգտում, ինքն իր համար ստեղծել էր մի տուփ, մի պատեան, որ առանձնացնէր և պաշտպանէր նրան արտաքին պատահարներից: Իրականութիւնը նրան զրբզուում, վախեցնում էր, յարատե յուզմունքի մէջ էր պահում և, գուցէ հէնց նրա համար, որպէսզի արդարացնէ իր այդ երկչոտութիւնը, գէպի ներկան ունեցած ատելութիւնը. և միշտ գովում էր անցեալը և այն, որ երբէք չէ եղել ու այն հին լեզուները, որոնք աւանդում էր նա, իսկապէս նրա համար նոյն կրկնակօշիկներն ու հովանոցն էին, որոնց մէջ նա թագնում էր:

— Ո՛հ, որքան քաղցրահնչիւն, որչափ գեղեցիկ է յունաց լեզուն—ասում էր նա քաղցր արտայայտութեամբ և՛ իբրև ապացոյց իր խօսքերին, աչքերը հուպ տալով և մատը բարձրացնելով արտասանում էր—Մ. ն տ ր օ պ օ ս:

Բէլիկովը իր միտքը նոյնպէս աշխատում էր տուփի մէջ թագցնել: Նրա համար միայն պարզ էին այն շրջաբերականները և լրագրական յօդուածները, որոնց մէջ արգելւում էր որևէ բան: Երբ շրջաբերականում արգելւում էր աշակերտներին երեկոյեան ժամը 9-ից յետոյ փողոց դուրս գալը, կամ թէ մի որևէ յօդուածում արգելւում էր Ֆիզիքական սէր, այն ժամանակ նրա համար պարզ էր և որոշ՝ արգելալուծ է—և պրծաւ գնաց: Իսկ եթէ մի որևէ բանի համար թույլտուութիւն կամ իրաւունք էր ստացւում, նա այդ բանի մէջ տեսնում էր քօղարկուած, անբացադրելի մի բան: Երբ քաղաքում թույլ էին տալիս գրամատիկական ընկերութիւն կազմել, կամ ընթերցարան, կամ թէյա-

բան բաց անել, այն ժամանակ նա գլուխը շար-
ժոււմ էր և ցած ձայնով ասում. «իհարկէ, այդ-
պէս է, այդ բոլորը շատ գեղեցիկ է, սակայն չը-
լինի թէ մի քան դուրս գայ»:

Ամեն տեսակ գեղծում, գանցառութիւն,
կամ կանոններից շեղում նրան վհատեցնում էր,
թէև իսկպպէս, գործը ամենևին նրան չէր վերա-
բերում: Եթէ ընկերներից մէկը մաղթանքին ու-
շանում էր, կամ դաստիարակչուհուն տեսնում էր
ուշ երեկոյեան օֆիցերի հետ, այն ժամանակ նա
խիստ վրդովում էր և շարունակ ասում. *չը լինի
թէ մի քան դուրս գայ*: Իսկ մանկավարժական ժո-
ղովներում, ուղղակի մեզ ճնշում էր իր զգուշու-
թեամբ, իր կասկածոտութեամբ և զուտ սահմա-
նափակ մտածմունքներով, օրինակ, թէ օրիորդաց
և թէ տղայոց զիմնազիաներում երիտասարդներն ի-
րանց վատ են պահում, դասարաններում այնքան
աղմուկ են բարձրացնում... *ճի, յանկարծ վար-
չութիւնը չիմանայ, ճի, չը լինի թէ մի քան
դուրս գայ*—և եթէ երկրորդ դասարանից դուրս
անէինք Պետրովին, իսկ չորրորդից Եգորովին—այն
ժամանակ շատ լաւ կը լինէր: Եւ ինչ: Իր ախ ու
վախով, մտավախութեամբ, իր մութ ակնոցներով
գունատ փոքրիկ երեսին—ինչպէս առնետի,—նա
մեզ բոլորիս ճնշում էր, և մենք դէպի նա զիջո-
ղաբար էինք վերաբերվում, Պետրովի և Եգորովի
վարքի թուանշանը պակասեցնում, նրանց բանգար-
կում էինք և վերջ ի վերջոյ դուրս էինք անում
զպրոցից: Նա տարօրինակ սովորութիւն ունէր, այն
էր. կայցելէր մեր բնակարանները: Նա կրգար ու-
սուցիչներիս մօտ, լուռ մի ժամ, երկու ժամ կը
նստէր և ապա դուրս կը գնար: Նրա կարծիքով այդ
կը նշանակէր «ընկերների հետ լաւ յարաբերութիւն
պահպանել» և պարզ էր, որ մեզ մօտ գալն ու նըս-
տելը նրա համար շատ ծանր էր. նա գալիս էր մեզ
մօտ միայն նրա համար, որ իբր թէ դրանով իր

ընկերական պարտականութիւնն է կատարում: Մենք
ուսուցիչներս, նրանից վախենում էինք: Եւ մինչև
անգամ դիրեկտորն ևս վախենում էր: Համեցէք, թէև
մեր ուսուցիչներն ամենքն էլ մտածող, կարգին մար-
դիկ են, Տուրգենևով և Շչեգրլինով կրթուած, սա-
կայն այն մարդը, որ միշտ կրկնակօշիկով և հովա-
նոցով էր ման գալիս, տասն և հինգ ձիգ տարիներ
ամբողջ զիմնազիան ձեռումն էր պահում... Էհ,
ինչ զիմնազիան, այլ ամբողջ քաղաքը: Մեր տիկին-
ները շաբաթ երեկոներն ընտանեկան ներկայացում-
ներ չէին տալիս, վախենում էին մի գուցէ նա ի-
մանայ, հոգևորականներն ևս նրա ներկայութեամբ
քաշոււմ էին պաս ուտել, թուղթ խաղալ: Այդպիսի
մարդկանց ազդեցութեան տակ, ինչպէս Բէլիկովն
է, վերջին 10—15 տարուայ ընթացքում մեր քա-
ղաքում սկսեցին ամեն բանից վախենալ: Վախե-
նում էին բարձր ձայնով խօսել, նամակներ գրել,
ճանօթանալ, գրքեր կարդալ. վախենում էին չքա-
ւորներին օգնել, գրել-կարդալ սովորեցնել...

Իվան Իվանիչը կամենալով մի բան ասել, հա-
զաց, բաց նա չիբուխը վառեց, նայեց լուսնին և
ապա սկսեց մի տեսակ ձայնն երկարացնելով.

—Այո, խելօք, կարգին մարդիկ կարգում էին
Շչեգրին, Տուրգենև, գիտնական գրքեր, ո՞վ զիտէ
զանազան Բօկլիներ, և այլն, սակայն դարձեալ հը-
պատակուեցան, համբերութեամբ տարան... Ահա
թէ ինչումն է բանը...

Բէլիկովն ապրում էր միևնոյն տանը, որտեղ
ես էի ապրում, շարունակեց Բուրկինը, միևնոյն
յարկում, դուռս դռան դիմաց. մենք յաճախ իրար
տեսնում էինք և ես նրա ընտանեկան կեանքին
ճանօթ էի. իր տանն էլ նոյն տարօրինակ պատ-
կերն էր ներկայացնում—խալթ, գիշերազըլ-
խարկ, փեղկեր, սողնակներ և մի շարք պահպա-
նողական իրեր,—և *ճի, չը լինի թէ մի քան դուրս
գայ*:—Պաս պահելը նրան վնասում էր, իսկ պաս

ուտելը անկարելի էր, որովհետև կասեն թէ՛ Բէ-
լիկովը պատ չէ պահում. նա իւրով սուգակ ձուկն
էր ուտում. այնպիսի կերակուր, որ ոչ պասուան,
ոչ ուտիսուան էր*): Երկիւղից կին աղախին չէր
պահում, որպէսզի նրա մասին վատ բան չմտա-
ծէին, խոհարար Աթանասին էր պահում, 60 տա-
րեկան ծերունի, արբեցող, խելքից թեթեւ, որը
մի ժամանակ օֆիցերի մօտ դենշչիկ էր և մի
կերպ կարողանում էր կերակուր պարաստել: Այդ
Աթանասը սովորաբար դռների մօտ ձեռները խա-
չած և ծալած կանգնում էր և միշտ խոր հառա-
չելով մըթմըթում.— է, նրանց նմաններն այժմ
այնքան շատացել են որ...

Բէլիկովի ննջարանը փոքր էր, արկղի նման,
մահճակալն էլ վարագոյրով ծածկուած էր: Երբ
պառկում էր քնելու, գլուխը ծածկում էր վեր-
մակի տակ. օդը տաք. ծանր էր, փակ դռներին
քամին զարկում էր; իսկ վառարանում վզվզում:
Խոհանոցից լսում էր հառաչանքներ, շարագու-
շակ հառաչանքներ...

Եւ նա վերմակի տակ սարսափում էր: Նա
վախենում էր, չը լինի թէ մի բան դուրս գայ.
մի գուցէ Աթանասը ներս մտնէ և սպանէ իրան,
մի գուցէ գողերը սենեակ մտնեն. իսկ ամբողջ գի-
շերները լուզմունքից երազներ էր տեսնում և ա-
ռաւօտեան, երբ մենք միասին գնում էինք գիմ-
նազիան, նա ամբողջ էութեամբ սարսափելի և
զգուելի էր—նրա համար, այդ բնութեամբ միայ-
նակեաց մարդու համար, ինձ հետ միասին գիմ-
նազիայ գնալը ծանր էր...

—Չափից դուրս ազմուկ են բարձրացնում
դասարանում, ասում էր նա: Կարծես թէ աշխա-
տում էր իր ծանր զգացման բացատրութիւնը
գտնել, բայց ոչ մի բանի նման չէր լինում:

Եւ այդ յունաց լեզուի ուսուցիչը, այդ պա-

տեանի մէջ փակուած մարդը, կարող էք երևա-
կայել, քիչ էր մնացել, որ ամուսնանար:
Իվան Իվանիչը շտապով աչքի անցկացրեց սը-
բահը, ապա ասաց.

—Կատակ էք անում:

—Հա, տարօրինակ էր, բայց քիչ էր մնացել,
որ ամուսնանար: Մեզ մօտ պատմութեան և աշ-
խարհագրութեան ուսուցիչ էին նշանակել ոմն Մի-
խայիլ Սովիչ Կովալենկո, որն ազգով խախտ էր:
Նա մէնակ չէր եկել, այլ իր քոյր Արինկայի հետ
միասին: Նա ջահել, բարձրահասակ, թխադէմ,
մեծ-մեծ ձեռներով և դէմքից երևում էր, որ
հաստ ձայն պիտի ունենար, և ճիշտ, կարծես թէ
նրա ձայնը տակառի մէջից դուրս գալիս լինէր՝
բու, բու, բու—իսկ օրիորդը, թէև այնքան էլ
ջահել չէր, ըստորում մօտ երեսուն տարեկան
էր, բայց նոյնպէս բարձրահասակ, վայելչակազմ,
սեւօտն և կարմրաթուշ—մի խօսքով, ոչ թէ աղ-
ջիկ, այլ մարմելադ, և ինչպէս նա աշխոյժ և ան-
հանգիստ էր, շարունակ երգում էր մալօրօսական
բօմաններ և քրքրում: Բաւական էր փոքր ա-
ռիթ, վերջացաւ, այնուհետև սկսում է բարձր-
բաձայն ծիծաղել հա, հա, հա... Մեր առաջի հիմ-
նաւոր ծանօթութիւնը Կովալենկոյների հետ, լի-
շում եմ դիրեկտորի անուանակոչութեան օրն էր:
Գաժան, ձանձրալի կերպով փքուած մանկավարժ-
ների մէջ, որոնք անուանակոչութեան անգամ
գալիս են պարտականութիւնից ստիպուած, յան-
կարծ տեսնում ենք մի նոր Աֆրոդիտէ փրփուրից
վերածնուած: Ձեռները կողքին դրած քրքրում էր,
երգում ու պարում... Նա զգացուած երգում էր
„ВІЮТЬ ВІТРЫ“, լետոյ նորից բօմանս, կրկնում
էր մի քանի անգամ և մեզ բոլորիս դիւթում էր,
—բոլորիս, մինչև անգամ Բէլիկովին: Նա օրիորդի
մօտ նստեց և քաղցր ժպտով ասաց.

—Մալօրօսների լեզուն իր քնքշութեամբ և

*) Ռուսների համար ձուկը պատ չէ: ծ. Թ.

բաղը հնչեւններով ինձ հին յունարէնն է լիշեցը-
նում:

Այդ բանը օրիորդին շողքորթեց և նա սկսեց
ողևորուած և համողիչ կերպով պատմել, թէ Գաղի-
չեան նահանգում կալուածք ունեն, այնտեղ է
ապրում իր մայրը, և կալուածքում այնպիսի տան-
ձեր կան, այնպիսի սեխեր, այնպիսի գդուամներ և
կաղամբ, և այդ կարծիքներով ու կապուտիկնե-
րով բորչչենք պատրաստում «այնքան համեղ, այն-
քան համեղ է լինում, որ չեմ կարող ազել»:

Մենք ամենքս լսում էինք և յանկարծ մեր
գլխներում այսպիսի մի միտք ծագեց:

— Ինչ լաւ կլինի, որ սրանց պատկենք, ցած
ձայնով ասաց զիրեկտորի կինը:

Մենք ամենքս չգիտէինք, թէ ինչու լիշեցինք,
որ մեր Բէլիկովը ամուսնացած չէ, և մեզ ամբո-
րինակ էր թւում, որ մինչև այժմ չէինք նկատել,
բոլորովին աչքաթող էինք արել նրա կեանքի այդ-
պիսի կարևոր հանգամանքը: Առհասարակ Բէլիկո-
վը ինչպէս էր վերաբերում գէպի կանայք, ինչ-
պէս էր վճռում մարդու կեանքի վերաբերեալ էա-
կան հարցերը, անաջ այդ բոլորը մեզ չէր հետա-
քրքրում, գուցէ մենք մինչև անգամ թող չէինք
տարիս այսպիսի մի միտք, որ ամեն եղանակի
կրկնակօշիկներով շրջող և վարագուրի տակ քնող
մարդը կարող է սիրել:

Նա վաղուց քառասունն անց է կացրել, իսկ
օրիորդը երեսուն տարեկան է: Գիրեկտորի կինը
պարզեց իր միտքը: Ինձ թւում է, որ օրիորդը կա-
մուսնանայ նրա հետ:

Եւ ինչեր ասէք, որ ձանձրոյթից գաւառական
կեանքում չէ կատարվում, որքան անմիտ, ան-
պէտք բաներ: Եւ պատճառն այն է, որ բոլորովին
այն չէ կատարվում, ինչ որ հարկաւոր է: Ահա
թէ ինչու պէտք էր յանկարծ Բէլիկովին ամուս-
նացնել, որին չէր կարելի ամուսնացած երևակայել:

Գիրեկտորի, տեսչի կանայք և մեր զիմնագիտի
բոլոր տիկիները աշխուժացան և մինչև անգամ
սիրունացան, կարծես թէ յանկարծ կեանքի նպա-
տակը տեսան: Գիրեկտորի կինը թատրոնում օթեակ
էր վերցնում, և մէկ էլ տեսնում էինք նրա օ-
թեակում նստած էր Վարինկան ձեռին մի տեսակ
հովհար, փքուած, երջանիկ և նրա մօտ էլ կարճ-
լիկ, կծկուած, կարծես թէ տանից աքցանով դուրս
քաշած Բէլիկովը: Երեկոյթ էր լինում և տիկիներ-
ը պահանջում էին, որ անպատճառ հրաւիրենք
եւ Բէլիկովին եւ Վարինկային: Մի խօսքով մեքե-
նան լարուած էր: Երբօր մօտ այրելն նրա համար
էլ այնքան ուրախալի չէր, միայն այսքանն յայտ-
նի էր, որ ամբողջ օրերով կռոււմ և միմեանց
հայհոյում էին: Ահա ձեզ տեսարան. փողոցով գը-
նում էր Կովալենկօն բարձրահասակ, կոպիտ, ասեղ-
նագործ շապկով, մազերը ձուկտին թափած, մի ձե-
ռին գրքի կապոց, միւսում ոստոտ ձեռնափայտ: Նը-
րա լետեկից գնում էր քուրը, նոյնպէս գրքերը ձեռին:

— Սխալ դու Միխայիլ-ջան, չես կարգա-
ցել այդ—բարձր ձայնով վիճում էր օրիորդը: Ես
քեզ ասում, երգում եմ, որ դու բոլորովին չես
կարդացել այդ բանը:

— Իսկ ես քեզ ասում եմ, որ կարդացել եմ,
աւելի բարձր բղաւում էր Կովալենկօն, ձեռնա-
փայտը գետնին խփելով:

Տանը հէնց որ կողմնակի մարդ էր լինում,
իսկայն տուր ու դմփոցը սկսում էր: Այդպիսի
կեանքը, իհարկ է, ձանձրացրեց օրիորդին. նա
ցանկանում էր իր սեպհական անկիւնն ունե-
նալ, ի նկատի ունեցէք և նրա հասակը. այստեղ
կռադատելու ժամանակ չէ, նա պատրաստ էր ամուսնանալու
ամեն պատահած մարդու հետ, նոյն
իսկ յունաց լեզուի ուսուցչի հետ: Պէտք է ասել,
որ մեր օրիորդների մեծամասնութեան համար
միւսնոյն է, ով լինի ամուսինը, միայն թէ մարդու

գնան: Մի խօսքով Վարինկան սկսեց ցոյց տալ Բէլիկովին պարզ համակրութիւն:

Իսկ Բէլիկովը: Նա Կովալենկօյի մօտ ևս գրնում էր այնպէս, ինչպէս մեզ մօտ: Կը գնար նրա մօտ, լուռ կը նստէր: Նա լուռ ու մունջ էր, իսկ Վարինկան երգում էր նրա համար „ВІОУТЪ ВІУТРЫ“ կամ թէ մտքի մէջ խորասուզուած՝ նայում էր մութ աչքերով, կամ յանկարծ ծիծաղում էր:

—Հա, հա, հա...

Սիրահարական գործում, մանաւանդ ամուսնութեան մէջ, ներշնչումն մեծ դեր է խաղում: Ամենքը—թէ ընկերներ, թէ տիկիներ—սկսեցին Բէլիկովին հաւատացնել, որ նա պիտի ամուսնանայ, որ նրա համար կեանքում ոչինչ չէ մնում, միայն ամուսնութիւնը: Մենք ամենքս նրան շնորհաւորեցինք. լուրջ դէմքով զանազան լիմարութիւններ էինք ասում, այսպէս օրինակ, թէ ամուսնութիւնը լուրջ քայլ է. պէտք է ասած, որ Վարինկան էլ այնքան տգէտ չէր, հետաքրքիր էր. նա ստատակի սովետնիկի աղջիկ էր, ունէր կալուածք և գլխաւորը՝ Վարինկան առաջինն էր, որ քաղցրութեամբ, սրտալի վերաբերուեց դէպի նա,—Բէլիկովի գլուխը պտոյտ եկաւ. և նա վճռեց, որ իսկապէս անհրաժեշտ է ամուսնանալ:

Ահա, հէնց այդ ժամանակ պէտք էր նրա ձեռից խլել կրկնակօշիկները և հովանոցը, ասաց Իվան Իվանիչը:

—Երեւակայեցէք, այդ բանը անհնարին դարձաւ:

Նա Վարինկայի լուսանկարը իր սեղանի վրայ դրեց և լաջախ գալիս էր մօտս ու Վարինկայի ընտանեկան կեանքի մասին էր խօսում, և այն մասին, որ ամուսնութիւնը լուրջ քայլ է. յաճախ Կովալենկօյի մօտ էր լինում, սակայն ապրելու եղանակը բոլորովին չըփոխեց: Մինչև անգամ ընդհակառակն,

ամուսնանալու գիտաւորութիւնը նրա վրայ հիւանդոտ ազդեցութիւն արեց, նա գունատուեց, կարծես թէ աւելի խոր մտաւ իր արկղիկի մէջ:

Վարվարա Սավիչնան դուր է գալիս ինձ, ասում էր նա թոյլ և շրթունքները մի կողմը ծրուած ժայտով,—և ես գիտեմ, որ ամեն մարդու հարկաւոր է ամուսնանալ, բայց... այդ բոլորը գիտէք, մի տեսակ յանկարծ պատահեց, հարկաւոր է մտածել:

—Էլ ինչ մտածելու բան կայ—ասում եմ նրան—ամուսնացէք, պրծաւ գնաց:

Ո՛չ, ամուսնութիւնը լուրջ քայլ է, նախ և առաջ պէտք է կշռել առաջիկայ պարտականութիւնները, պատասխանատուութիւնը... որպէս զի յետոյ մի բան չը պատահի: Այդ ինձ այնպէս անհանգստացնում է, որ ամբողջ գիշերները չեմ կարողանում քնել: Եւ պէտք է խօստովանել, որ ես վախենում եմ, որովհետեւ օրիորդը և կղբայրը մի տեսակ տարօրինակ հայեացքներ ունեն, նրանք մի տեսակ են գատում, գիտէք, օտարոտի և բնաւորութիւնն անհանդիստ է: Վամուսնանամ, մէկ էլ թարսի պէս մի խաթի մէջ կնկնեմ:

Եւ նա առաջարկութիւն չէր անում, այլ շարունակ յետաձգում էր, ի մեծ բարկութիւն գիրեկտորի կնոջ և մեր բոլոր տիկիների. շարունակ և առաջիկայ պարտականութիւնները և պատասխանատուութիւններն էր կշռում, իսկ մինչդեռ նա գրեթէ ամեն օր Վարինկայի հետ էր զբօսնում. շատ կարելի էր, կարծում էր նա, թէ որ նրա դրութեանն այդպէս էլ հարկաւոր էր, և ինձ մօտ էր գալիս ընտանեկան կեանքի մասին խօսելու: Եւ հաւանօրէն, վերջ ի վերջոյ, նա առաջարկութիւն կանէր և կը կատարուէր այն անպէտք և լիմար պսակներից մէկը, որոնց նմանը մեր մէջ տխրութիւնից և անգործութիւնից հազարներով է կատարում, եթէ միայն յանկարծ չպատահէր

Կոլոսա-լիսի Տանգոլ: Պէտք է տեսլ, որ Վարին-
կայի եղբայր Կովալենկոն, հէնց ծանօթութեան
առաջի օրից սկսած ատեց Բէլիկովին և աչքով
աչք չունէր նրան տեսնելու:

—Ձեմ հասկանում.—ասում էր նա մեզ, ուսե-
րը վեր քաշելով, չեմ հասկանում դուք ինչպէս էք
մարտում այդ լրտեսին, այդ զգուելի ուխտին: Ե՛,
պարոններ ինչպէս էք ապրում, ձեր միջնորդը
խեղդիչ և սիղծ է: Միթէ դուք մանկավարժներ
էք, ուսուցիչներ էք: Դուք աստիճանի լետուից
ընկնողներ էք, դուք ոչ թէ գիտութեան տաճար
ունէք, այլ հնազանդութեան իշխանութիւն, որ
նեխուած բանի հոտ է փչում, ինչպէս ոստիկանա-
կան բուզակայից: Ո՛չ, եղբայր, մի քիչ էլ կապրեմ
ձեզ հետ և ապա կը գնամ մեր կալուածքը, խեց-
գետին կորսամ և խախտչների երեխաներին կը սօ-
փորացնեմ գրել-կարգալ: Կը գնամ, իսկ դուք մը-
նացէք ձեր յուզայի հետ միասին:

Կամ թէ նա ծիծաղում, քրքում էր այնքան,
որ աչքերն արցունքով լցւում էին, երբեմն հաստ
ձայնով, երբեմն ճշոցով և լետոյ ձեռները պար-
զելով հարցնում էր.

—Ի՞նչու է նա մեզ մօտ գալիս: Ի՞նչ է ուզում:
Նստում է և նստում: Նա մինչև անգամ Բէլիկո-
վին մականունն էր տուել «սարդի պէս կուլ տող»:
Եւ, ի հարկէ, մենք խոյս էինք տալիս նրա հետ
խօսելուց, այն մասին թէ նրա քոյր Վարինկան
պատրաստում է գնալ «սարդի նմանին»: Եւ երբ
մի անգամ գիրեկտորի կինը ակնարկեց նրան, որ
լու կլինի աջողացնել նրա քրոջը այնպիսի ծան-
րաբարոյ, ամենքից յարգուած մարդուն տալ, ինչ-
պէս Բէլիկովին է, այն ժամանակ նա յօնքերը կի-
տեց և մրթմրթաց:

—Այդ իմ գործը չէ, թող նա ամուսնանայ
ամենանայեալ մարդու հետ, ես չեմ սիրում ուրիշ-
ների գործում խառնուել:

Այժմ լսէք թէ լետոյ ինչ պատահեց: Մի
ինչ-որ չարածճի կարիկատուրա նկարեց—Բէլիկովը
կրկնակօշիկով, վարտիկի ծայրերը վեր ծալած, մեծ
հովանոցը ձեռին բռնած, և նրա հետ թեանցուկ
Վարինկան գնում են. ներքեւում գրած է «Սիրահա-
րուած մարդ»: Սրտայայտութիւնը զարմանալի կեր-
պով ճիշտ քմբռնած է, հասկանում էք, զարմա-
նալի: Նկարիչն սկսեց է որ դրա վրայ մի քանի
գիշերներ աշխատած լինի, որովհետև օրիորդաց
և տղայոց գիմնազիայի բոլոր ուսուցիչները, թե-
մական դպրանոցի ուսուցիչները, աստիճանաւոր-
ները—բոլորը մի-մի օրինակ ստացան: Բէլիկովը
նույնպէս մի օրինակ ստացաւ: Կարիկատուրան նրա
վրա շատ ծանր սպաւորութիւն թողեց:

Մենք միասին տանից դուրս էինք գալիս, այդ
ճիշտ մալիսի մէկն էր, օրը կիրակի, և մենք բո-
լոր ուսուցիչներս, գիմնազիստները պայմանաւո-
րուեցինք հաւաքուել գիմնազիայի մօտ, որ լետոյ
բոլորս գնանք միասին քաղաքից դուրս անտառը,
—մենք ուրախ ենք, որ դուրս ենք գնում, իսկ
նա ամպերից աւելի մռայլ էր, և դէմքով կանաչ:

—Ինչ տեսակ վատ, չար մարդիկ կան—ասաց
նա և նրա շրթունքները դողդողացին:

Մինչև անգամ ես նրա վրայ խղճացի: Գնում
էինք և յանկարծ, կարող էք երևակայել, տեսնում
ենք Կովալենկոն վերսիպեդով զբօսնելիս իսկ
նրա լետուից Վարինկան, նույնպէս վերսիպեդով
կարմիր երեսով, յօգնած, բայց ուրախ և գուարթ:

—Ահա և մենք—կոչեց նա և առաջ գնաց:

Մնապէս լու եղանակ էր, այնպէս լու, որ
զարմանալի էր:

Եւ երկուսն էլ անհետացան: Իմ Բէլիկովը
կանաչ գոյնից սպիտակ փոխուեց և մնաց քար
կարած: Կանգ առաւ և նայեց ինձ վրայ:

—Խնդրեմ ասէք այս ինչ բան է—հարցրեց նա
—դուցէ աչքերս են ինձ խաբում: Միթէ գիմնա-

դիայի ուսուցչին և կնոջ վայել է վելոսիպեդով ման գալ:

— Ինչ մի անվայել բան կայ այստեղ, ասացի ես:— Թող իրանց քէֆին ման գան:

— Բայց ինչպէս կարելի է— բացականչեց նա, ապշելով սառնութեանս վրայ: Ինչ էք ասում:

— Եւ այնպէս ասլաժ էր, որ նա չըկարողացաւ ճանապարհը շարունակել ու վերադարձաւ տուն:

Միւս օրը նա բոլոր ժամանակ ջղային դրութեան մէջ ձեռներն իրար էր շփում և սարսուռ էր, դէմքից երևում էր, որ նա առողջ չէ: Եւ պարսպանքը կիսատ թողեց ու գնաց տուն, որ նըրա կեանքում առաջին անգամն էր պատահում: Եւ չըճաշեց: Իսկ երեկոյեան դէմ տաք հագնուեց, թէև դուրսը բոլորովին ամառուայ եղանակ էր և ոտները քարշ տալով գնաց Կովալենկոների մօտ: Վարինկան տանը չէր, միայն եղբօրը տանը գտաւ:

— Ինչդրեմ, համեցէք, — սառն և յծքերը կիտելով ասաց Կովալենկոն, նրա դէմքը քնաթաթախ էր, հէնց նոր էր ճաշից յետոյ հանգստացել և բոլորովին քէֆ չուներ:

Բէլիկովը մօտ տասն ըոպէ լուռ նստեց և ապա սկսեց:

— Ես ձեզ մօտ եմ եկել, որպէսզի սիրտս մի քիչ թեթևացնեմ: Ինձ համար շատ, շատ ծանր է:

Մի ինչ որ պատկուհիւրանտ ծիծաղաշարժ դրութեան մէջ նկարել է ինձ, և մի ուրիշ, մեզ երկուսիս մերձաւոր անձի ևս: Պարտք եմ համարում հաւատացնել ձեզ, որ ես այդ բանում երբէք մեղաւոր չեմ... Եւ ո՛չ մի առիթ չեմ տուել այդ պիսի ծաղրի, — ընդհակառակը՝ միշտ պահել եմ ինձ միանգամայն օրինաւոր մարդու նման:

Կովալենկոն լուռ, փքուած նստել էր: Բէլիկովը մի քիչ սպասեց և մեղմ ու տխուր ձայնով շարունակեց:

1002
3419

— Իե՛ս մի բան ունիմ ձեզ ասելու: Ես վաղուց ծառայում եմ, իսկ դուք նոր էք սկսում ծառայել, և ես սլարտք եմ համարում, ինչպէս աւագ ընկեր, նախազգուշացնել ձեզ: Դուք վելոսիպեդով էք զբօսնում, իսկ այդ զուարճութիւնը բոլորովին վայել չէ պատանիների դաստիարակչին:

— Ի՞նչու — հաստ ձայնով հարցրեց Կովալենկոն:

— Միթէ բացադուրթեան դեռ կարիք կայ: Միխայիլ Սավիչ, միթէ այդ հասկանալի չէ: Եթէ ուսուցիչը վելոսիպեդով է ման գալիս, այն ժամանակ աշակերտին մնում է գլխի վրայ ման գալ: Եւ եթէ այդ մի անգամ շրջաբերականով թող չէ տըրուած, ուրեմն անկարելի է: Ես երէկ սարսափեցի... երբ ձեր քրոջ տեսայ, աչքերս մթնեցին: Կինը կամ աղջիկը վելոսիպեդի վրայ — Աստուած իմ, այդ զարհուրելի է:

— Իսկապէս դուք ինչ էք ուզում:

— Ես միայն մի բան եմ ցանկանում — զգուշացնել ձեզ, Միխայիլ Սավիչ: Դուք ջահէլ մարդ էք, տպագայ ունէք, պէտք է ձեզ շատ, շատ ըզգոյշ պահէք, իսկ դուք զանցառութեան էք տալիս ձեր պարտականութիւնները. ախ, ինչպէս դուք արհամարհում էք, դուք միշտ ասեղնագործ շապիկով, ձեռիդ ինչ որ զրքեր բռնած փողոցով ման էք գալիս իսկ այժմ էլ վելոսիպեդով: Թէ դուք և թէ ձեր քոյրը վելոսիպեդով էք շրջում, դիրեկտորը կիմանայ, յետոյ հոգաբարձուի ականջին կը հասնի... Դրանից ինչ օգուտ:

— Որ ես և քոյրս վելոսիպեդով ենք զբօսնում, ում ինչ դործն է, ասաց Կովալենկոն և շառագունեց: — Իսկ ով իմ տնային և ընտանեկան գործերի մէջ կը համարձակուի խառնուել, այն ժամանակ ես նրա հէըը կանիծեմ:

Բէլիկովը գունատուեց և տեղից վեր կացաւ:

— Եթէ դուք ինձ հետ այդպիսի ոտնով էք



խօսում, այն ժամանակ ես չեմ կարող շարունակել,
— ասաց նա:

— Եւ խնդրում եմ իմ ներկայութեամբ իշխա-
նութեան մասին այդպէս չըխօսէք, դուք յար-
գանքով պիտի վերաբերուէք դէպի վարչութիւնը:

— Միթէ ես որեւէ վատ բան եմ ասում
վարչութեան դէմ, հարցրեց Կովալենկօն չարացած
նայելով նրա վրայ, — խնդրեմ ինձ հանգիստ թո-
ղէք: Ես ազնիւ մարդ եմ և այդպիսի պարօնի հետ,
ինչպիսին դուք էք, չեմ կամենում խօսակցել: Ես
լրտեսներին, լուր տանողներին չեմ սիրում:

Բէլիկովը շփոթուեց և սարսափահար դէմքով
սկսեց շտապով հագնուել: Ձէ որ կեանքում առա-
ջին անգամն էր լսում այդպիսի կոպիտ խօսքեր:

Կարող էք խօսել ինչ որ ձեզ հաճելի է, ա-
սաց նա դուրս գալով նախասենեակից ուղղուելով
դէպի սանդուղքը: Ես պատրաստ եմ միայն ձեզ
զգուշացնել՝ դուցէ — մէկը մեզ խօսելիս լսել է և
որպէս զի մեր խօսակցութիւնը բերանի մաստակ
չը դառնայ և մի ինչ որ բան դուրս չը գայ, ես պիտի
մեր խօսակցութեան գլխաւոր կէտերը լայտնեմ
մեր դիրեկտորին: Ես ստիպուած եմ այդ անելու:

— Յայտնել, զնա իմաց տուր:

Կովալենկօն նրա օձիքի յետևի մասից բռնեց և
այնպէս հրեց, որ Բէլիկովը սանդուղքից ցած գը-
լորուեց իր կրկնակօշիկներով աղմուկ հանելով:
Սանդուղքը բարձր էր և քիչ թեք, բայց նա մինչև
տակը առանց վնասի գլորուեց. յետոյ վեր կացաւ
քիթը շօշափեց, մի դուցէ ակնոցները կտորուած
լինին: Իսկ նոյն րոպէին, երբ նա սանդուղքով ցած
էր գլորուում, Վարինկան երկու տիկինի հետ միա-
սին ներս մտաւ. նրանք ներքեւում կանգնած նա-
լում էին — և Բէլիկովի համար դրանից աւելի զար-
հուրելի բան չը կար: Աւելի լաւ էր վիզն ու ջուխտ
ոտները կտորուէին, քան թէ ծաղրի առարկայ
դառնար... չէ որ այժմ ամբողջ քաղաքը կիմանայ,

լուրը դիրեկտորին և հոգաբարձուին կը հասնի —
անի, չը լինի թէ մի բան դուրս գայ, նոր կարե-
կատուրա կը նկարեն և այդ բոլորը նրանով կը
վերջանայ, որ կը հրամայեն հրաժարական տալ...
Երբ նա վեր կացաւ, Վարինկան հառաչեց և նայե-
լով նրա ծիծաղաշարժ գէմքին, տրորուած վերար-
կուին, կրկնակօշիկներին, չը հասկացաւ թէ բանն
ինչումն է. ենթացելով որ նա պատահամբ է
վայր ընկել, չը կարողացաւ իրան զսպել և սկսեց
բարձր ծիծաղել.

— Հն, հն, հա...

Եւ այդ շարունակաբար բլբլացող «հա, հա,
հա»-ներով վերջացաւ բոլորը. և հարսնախօսու-
թիւնը և երկրային կեանքը: Արդէն Բէլիկովը չէր
լսում թէ ինչ էր խօսում Վարինկան, և ոչինչ
չէր տեսնում: Տուն վերադառնալով ամենից ա-
ռաջ սեղանի վրայից օրիորդի լուսանկարը վերցը-
րեց, իսկ յետոյ պառկեց և այլևս չը վերկացաւ,
մօտաւորապէս երեք օրից յետոյ ինձ մօտ եկաւ Ա-
ֆանասին և հարցրեց, արդեօք հարկաւոր չէ բը-
ժշկի յետևից ուղարկել, որովհետև տիրոջ դրու-
թիւնը լաւ չէ երևում: Ես գնացի Բէլիկովի մօտ:
Նա վարագոյրի տակ պառկած էր, վերմակով պինդ
ծածկուած և լուռ էր. հարց տալիս նա միայն
պատասխանում էր այն կամ ոչ — և ուրիշ ոչ մի
բան: Նա պառկած էր, իսկ նրա մօտով անց ու
դարձ էր անում Աֆանասին խոժոռ, լօնքերը կի-
տած և խոր հառաչելով. նրա բերանից այնպէս
արաղի հոտ էր փչում, ինչպէս մի գինեանից:

Մի ամսից յետոյ Բէլիկովը մեռաւ: Մենք՝ այ-
սինքն երկու գիմնազիայի և սեմինարիայի ուսու-
ցիչներս նրան թաղեցինք:

Այժմ երբ նա դագաղումն էր պառկած, նրա
արաայատութիւնը հեզ, հաճելի էր, մինչև ան-
գամ ուրախ, կարծես թէ ուրախ էր, որ վերջա-
պէս դագաղի մէջ դրին, որից երբէք նա դուրս

չէ կարող գալ: Այո՛, նա իր իրէային հասաւ: Եւ կարծես թէ, ի պատիւ նրա, թաղման ժամանակ անձրեւային և մառիկ եղանակ էր և մենք բոլորս կրկնակօշիկով, հովանոցով էինք: Աւարինկան նոյնպէս թաղմանը ներկայ էր. և երբ դագաղը գերեզման իջացրինք, նա լաց եղաւ: Ես նկատեցի, որ խախոյները միայն լաց լինել և ծիծաղել գիտեն. միջին տրամագրութիւն նրանք չեն ունենում:

Խոստովանում եմ, այդպիսի մարդկանց թաղելը, ինչպէս Բէլիկովն է, մի մեծ զուարճութիւն է: Երբ մենք հանգստարանից վերադառնում էինք, այն ժամանակ համեստ և տխուր կերպարանք ունէինք, ո՛չ ոք չէր ցանկանում այդ բաւականութեան զգազմունքը պարզել. զգացմունք, որ պիտին մենք շատ և շատ վտղուց ենք փորձել, դեռ մտնկութեան հասակում երբ անից մեծերը հեռանում էին և մենք վազում էինք դէպի պարտեզ մի ժամ, երկու ժամ վայելում կատարեալ ազատութիւն: Ա՛խ, ազատութիւն, ազատութիւն: Նրա ձեռք բերելու ակնարկը, մինչև անգամ թոյլ յոյսը մարդու հոգուն թևեր են տալիս, — արդեօք ճիշտ չէ:

Մենք հանգստարանից լաւ տրամագրութեան տակ վերադարձանք: Եւ դեռ մի շաբաթից աւել չէ անցել, կեանքը սկսեց առաջուայ նման ընթանալ, նոյնպէս դաժան, տաղտկալի, անմիա կեանք, շրջաբերականով չ'արգելուած, բայց ոչ լիակատար ազատութիւն ունեցող, վերջապէս կեանքը դէպի լաւը չըփոխուեց: Եւ իրօք Բէլիկովին թաղեցինք, բայց որքան խաւարի մէջ դեռևս մարդիկ կան, դեռ որքան էլ նորից կաւելանան:

— Զէնց բանն էլ դրանումն է, — ասաց Իվան Իվանիչը և չիբուխը վառեց:

— Եւ սրբան դեռ ևս կ'աւելանան — կրկնեց Բուրկինը:

Գիմնագիտի ուսուցիչը չարգախից գուրս եկաւ,

նա միջահասակ մարդ էր, հաստ, բոլորովին ճազատ և սև միրուքով, որը հասնում էր մինչև գոտին և նրա հետ գուրս եկան երկու շուն:

— Ի՞նչ լուսին է, ասաց նա, երկնքին նայելով: Սրդէն կէս գիշեր էր: Այ կողմից երևում էր ամբողջ գիւղը, երկար փողոցը ձգուած էր հեռու մօտաւորապէս հինգ վերստ: Ամեն ինչ հանգիստ, խոր քնի մէջ էր ընկղմուած, ո՛չ շարժում, ո՛չ ձայն, մինչև անգամ մարդ չէր հաւատում, որ ընտելութեան մէջ կարող է պատահել այդպիսի խաղաղութիւն: Երբ լուսնեակ գիշերը տեսնում ես գիւղական ընդարձակ փողոցը իր խրճիթներով, գէգերով և նիրհոյ ուռենիներով, այն ժամանակ մարդուս հոգուն անդորրութիւն է տիրում, հոգու այդ հանգստութեան մէջ աշխատանքից, հոգսերից ու վշտերից թեթեւացած, գիշերային ստուերի մէջ ծածկուած, մարդս հեզ, տխուր, գեղեցիկ է երևում և կարծես թէ աստղերն անգամ նրա վրայ փաղաքշտնքով, սիրով են նայում և չարութիւնն այլևս երկրիս վրայ դուրս չունի ու ամեն բան բարեկեաց դրութեան մէջ է: Գիւղի ձախակողմեան ծայրից սկսվում էր դաշտը, որ հեռու երևում էր մինչև հորիզոնը և դաշտի ամբողջ տարածութիւնը լուսաւորուած էր լուսնի ճառագայթներով, նոյնպէս ո՛չ շարժում, ո՛չ ծայուտ:

— Զէնց բանն էլ դրանումն է, կրկնեց Իվան Իվանիչը:

— Իսկ այն, որ տարում են քաղաքում վատ հոտի, ճնշուած դրութեան մէջ, դրում ենք անպէտք թղթեր, խաղում ենք վիճա — միթէ այդ պատեան չէ: Իսկ այն, որ մեր ամբողջ կեանքը անց ենք կացնում պորտաբուծութեամբ, խարդախների, չիմարների հետ, քէֆ սիրող կանանց մէջ, խօսում ենք ու լսում զանազան չիմարութիւններ — միթէ դա պատեան չէ: Եթէ դուք կամենում

էք, կը պատմեմ ձեզ մի շատ խրատական սլա-
մութիւն:

—Ո՛չ, արդէն քնելու ժամանակ է ասաց
Բուրկինը:

—Յտեսութիւն մինչեւ վաղը:

Երկուսն էլ գնացին չարգախն և խոտի վրայ
պառկեցին: Հէնց երկուսն էլ ծածկուել և ննջում
էին, երբ լանկարծ շուկեց ոտքի թոյլ ձայներ թրխկ-
թրխկ... ինչ որ մէկը չարգախի մօտից անցնում
էր. առժամանակ ընդհատուիւմ էր ձայնը և
մի րոպէից լետոյ նորից թրխկ, թրխկ... շները սկը-
սեցին շարժուել և ձայն բարձրացրին:

—Սլո՛ւ Մաւրանն է,—ասաց Բուրկինը:

—Տեսնել և լսել, թէ ինչպէս են սուտ խո-
սում, ասաց Իվան Իվանիչը, միւս կողքի վրայ շուռ
գալով, և քեզ էլ ասում են լիմար նրա համար,
որ համբերութեամբ լսում ես սուտը, տանում ես
վերաւորական օտորութիւն, չը համարձակուելով
բացարձակ յայտնել, որ դու ազնիւ և ազատ մարդ-
կանց կողմն ես, և ինքզ ստում ես, ժպտում ես,
և այդ բոլորը մի կտոր հացի համար, տաք անկիւն
ունենալու, որեւէ աստիճանի համար, որի գինն է
գրօշ,—ո՛չ, այսպէս ապրել այլևս անկարելի է:

—Ե՛, դուք արդէն ուրիշ երգ էք երգում,
Իվան Իվանիչ, ասաց ուսուցիչը:—Սրի քնե՛նք:

Եւ տասը րոպէից լետոյ Բուրկինին արդէն
քնել էր: Իսկ Իվան Իվանիչը մի կողից միւսն էր
շուռ գալիս, լետոյ վերկացաւ, կրկին դուրս գնաց
և, նստելով գուան մօտ, չիբուխը կայցրեց:





Պատրաստ է տպագրութեան՝

II, Հաղարջ

և

III, Սիրոյ մասին

նոյն հեղինակի գրոյցները:

ԳԻՆՆ Է Յ ԿՈՊ.

2013

4023

2013

